№ 157 Սեպտեմբերի 15 (27) 1879 Սեպտեմբերի 15 (27) № 157

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Մշակъ“

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ամերիկա։ Անգլիա։ — Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ —Բանասիրական։ Ախալցխայից Ախալքալաք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Ավգանիստանի մայրաքաղաքի մէջ պատահած անցքերը շատ վատ տպաւորութիւն գործեցին թէ անգլիական լրագրութեան և թէ հասարակական կարծիքի վրա։ Ամենքը յարձակվում են այժմեան մինիստրութեան վրա։ Միայն մինիստրական պաշտօնական լրագիրները պաշտպանում են կառավարութիւնը մի կողմից մեղաւորութիւնը Հնդկաստանի փոխարքայի վրա գցելով, միւս կողմից փորձելով արդարացնել և այս վերջինին, յայտնելով, թէ այդ դժբաղդութիւնը, որ պատահեց անգլիական դեսպանութեան հետ Կաբուլում անկարելի է նախատեսել։

Կառավարութեան վրա յարձակվող լրագիրները, պահանջելով ներկայ մինիստրութեան փոփոխութիւնը, մօտաւորապէս հետեւեալ միտքն են յայտնում. պէտք է փոխել այժմեան մինիստրութիւնը, ոչ թէ այն պատճառով, որ նրա տեղ անհրաժեշտ է ազատամիտ մինիստրութիւն ընտրել, այլ որ կառավարչական ղեկը այնպիսի անձինքներին յանձնվի, որոնց քաղաքականութիւնը երկրի համար վտանգաւոր, դժբաղդ ապագայ չը պատրաստէ։ Լրագիրները չեն ցանկանում, որ պահպանողական կաբինետի տեղ, ազատամիտ լինի. նրանց համար մի և նոյն է Գլադստոն կը կառավարէ, թէ լորդ Դերբի, միայն թէ Ավգանիստանի մէջ պատահած անցքերը չը կրկնվեն։

Կաբուլի պատահարը կուսակցական վէճերին քաղաքականութեան մէջ և կուսակցական հակառակորդութիւններին երկրորդական տեղ տուին։ Ներկայ րոպէում, Կաբուլի պատահարի տպաւորութեան տակ, այլ ևս չեն վիճում քաղաքական սկզբունքների մասին, այլ հարցը նրանումն է, թէ կարելի է արդէօք հաւատալ այնպիսի անձինքներին Ավգանիստանի վերաբերութեամբ որոնք թեթեւամտութիւն ցոյց տուին և դիպլոմատիական յաղթութիւնների համար ամեն բան զոհեցին։

Հասարակութիւնը և լրագրութիւնը չէ յարձակվում մինիստրութեան վրա այն գործողութիւնների պատճառով, որոնք եղել են Գանդամակի խաղաղական դաշնագիրը ստորագրելուց առաջ։ Կառավարութեանը մեղադրում են նրանում, որ նա ստորագրեց խաղաղական դաշնագիրը Յակուբ-խանի հետ, առանց համոզվելու, որ Յակուբ-խանը կարող է իրագործել այն բոլորը, ինչ որ դաշնագրի մէջ յայտնված է և այս սխալմունք անելուց յետոյ, կամենալով դիմակաւորել իր անզգուշութիւնը, մայոր Կավանիարիի առաջնորդութեամբ մի դեսպանութիւն ուղարկեց Կաբուլ, դեսպանութեանը բաւականին զինուորական ոյժ չը տուեց և անգլիական զօրքերը դուրս բերեց Ավգանիստանից։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալքալաք, 1 սեպտ.

Թատրոնասէրների խումբը օգոստոսի 13-ին ներկայացրեց հայոց ուսումնարանի դահլիճում պ. Սունդուկեանցի «Պէպօն» յօգուտ աղքատ հայ—ուսանողների։

Հասարակութիւնը բաւական մնալով ներկայացումից, խնդրեց թատրոնասէրներից կրկնել նոյնը։

Նոքա կրկնեցին «Պէպօն» նոյն ամսի 19-ին կրկին օգուտ ուսանողների։ Այդ երկու ներկայացումներից դոյացաւ 176 ռուբլի։ Երկու ներկայացումների ծախս եղաւ 39 ռուբլի, 37 ռուբլի ևս տրվեցաւ տեղիս ուսումնարանների և դահլիճի վարձ, մնացած 100 ռուբլին ահա ուղարկում ենք ձեզ, յարգոյ խմբագիր, որ դուք ձեր ճանաչած ուսանողին (խեղճ) յանձնէք այդ գումարը։

Մենք չը վստահանալով ուրիշների վրա միայն ձեզ դիմեցինք։

Բագրատ Պիճիկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 10 սեպտեմբերի

Ձեր օրագրի 149 համարումը տպված իմ յօդուածի մէջ մի քանի տպագրական սխալներ կային. ահաւասիկ ի գիտութիւն ընթերցողաց, այդ սխալմունքները ուղղում եմ։

Գեր. հայր սուրբի առանց հաստատ ապացոյցի ինձ վրա սուտ հնարած անկարգութիւնները իմ կողմից, որպէս թէ պատահած է ի վաղուց հանդուցեալ տէր Յովսէփ Երիցեանցի, տէր Յարութիւն Զմչկեանցի և տէր Առաքել Սուքեասեանցի մենակն չեն անիծում մարդուն...Այդ ժամանակ դուրս եկաւ տանից մի բարձրահասակ աղամարդ որ հաւանօրէն տան էֆէնդին էր։ Կինը խսկոյն ծածկվեց, իսկ ես շարունակեցի զրաղվիլ թթով, մի նշան անդամ չը յայտնելով իմ հետաքրքրութեան առարկայի վրա։ Երբ նա մօտեցաւ ինձ, կասկածը փարատելու համար, ասացի թէ, տեսնելով այդչափ շքեղ թթենիներ, ես յիշեցի իմ հայրենիքը, որը շատ հարուստ է այդ ծառերով և չը կարողանալով զսպել իմ կարօտը, ուզեցի փորձել նոցա պտուղը, որի համից զրկված եմ արդէն տասը տարի։ Հիւրասէր մուսուլմանը խսկոյն շարժվեց իմ խօսքերից և դուրս կանչելով իր սիրուհուն հրամայեց որ մի պղնձէ պնակի վրա թութ պատրաստէ ինձ համար։ Նա մեծ պատրաստականութեամբ վազեց յանձնարարութեան ետևից ցոյց տալով ինձ մի խորամանկ ժպիտ։—Ախ, էֆէնդի, սիրաս վառեցին քո խօսքերը, ասեց զգայուն տանտիկը, մինթէ տասը տարի է որ չես տեսել քո հարազատների երեսը։—Այո, ամբողջ տասի տարի է։—Երևի դու հայ ես, էֆէնդի, և ամօթ չը լինի հարցնել որ տեղից արդեօք։ Խսկոյն լիացրի նորա հետաքրքրութիւնը։ Հա, Նուխին լաւ եմ ճանաչում, ասեց նա, այն տեղ շատ աբրեշում է դուրս գալիս։—Այո, ճիշտ է։—Վալլահ, էֆէնդի, հայ տեսնելիս ես մի առանձին համակրութիւն եմ զգում դէպի նորան, կարծես հայերը ազգական լինեն մուսուլմանների հետ։—Ինչ է քո ազգանունը հարցրեցի նորանից։—Կավտարաձէ է իմ ազգի անունը։—Ուրեմն քո նախնիքը կամ հայրը վրաց ազգից փոխված են, վստահոյ զարմանալի է որ վրացիներին թողած հայերին ես համակրում։—Մինթէ հնար է համակրել այնչափ բիրտ և կոպիտ մարդկերանց, էֆէնդիմ հէզրէթլէրի, պատասխանեց նա անկեղծ զգացմունքով։ Երևում էր որ նա շատ էր յարաբերութիւն ունեցել այդ երկու ազգերի հետ, որոնք յիրաւի մեծ տարբերութիւն են ներկայացնում իրանց վարքով և բնաւորութեամբ։ Խօսքս ի հարկէ թիֆլիսցիների վրա չէ, որոնցից ոչ հայն է հայի նման, ոչ վրացին վրացու....

Մուսուլմանների համեմատաբար աւելի համակրութիւնը դէպի հայերը ամենուրեք է. նա առաջ է գալի նոյնչափ հայերի վարվող և օտարների հետ մեղմ բնաւորութիւնից, որչափ և նոցա լեզուագիտական ընդունակութիւնից. լեզուագիտութիւնը մուսուլմանների նման մոլեռանդների աչքում արդէն կէս մուսուլմանութիւն է, վասն զի մահմեդականի խօսող լեզուն լիքն է այնպիսի ֆրազներով և դարձուածներով, որոնք կրում են կրօնական և դօղմատական բնաւորութիւն. նոցա իմանալը և արտայայտելը ի հարկէ փաղաքշում է կարճամիտների սիրտը։ Մինչդեռ միւս ազգերը արևելքում, ինչպէս օրինակ, վրացիք Կովկասում, ասորիք Պարսկաստանում ու յոյները Փոքր-Ասիայում չեն կարող հայերի չափ պարծենալ լեզուագիտական շնորհով։ Մինթէ հայերի այս թանկագին ձիրքը և բնաւորութեան յատկութիւնները պիտի արհամարհէ Անգլիան, երբ նա ցանկանում է լուսաւորութիւն սփռել Արևելքում. մինթէ նա չէ տեսնում որ օրէնսդրական յեղափոխութիւնները Պարսկաստանում, Եգիպտոսում և Թուրքիայում այժմ ևս հայերի ձեռքով են կատարվում. բոլորին յայտնի Նուբար-փաշան, Լօնդոնի պարսկական դեսպան Միրզա Մելքում խանը, որին յանձնած է արդէն ուսումնասիրել եւրօպական կոդէքսները մի նոր օրէնսդրական կանոնադրութիւն կազմելու Պարսկաստանի համար, Միղհատի մշտական մէնտօր և նորա տված սահմանադրութեան ներշնչող Օղեան—էֆէնդին և շատ ուրիշները թող

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ ԱԽԱԼՔԱԼԱՔ

—

Մտքովս էլ չէր անցնի որ մի փոքր ճանապարհ մօտ վաթսուն վերստ հեռաւորութեամբ այնչափ պէսպէսութիւններ կը ձևացնէր, որչափ Ախալքալաքի ճանապարհը. նա հետաքրքիր է ինչպէս բնութեան կողմից, այնպէս և ազգաբնակութեան, որը զետեղված է Կուր գետի ափերում աջ և ձախ սփռված գիւղերի մէջ։ Բայց թող ոչ ոք չը կարծէ, որ այդ ափերը կազմում են մի շարք հարթ ու հաւասար մարգագետինք, որոնց վրա ցրված են լինում սովորաբար բազմաթիւ հոտեր և երամներ, ոչ. այդ ափերը սեղմում են երկու կողմից հակայաձև ժայռեր, որ ընթանալով շրջամոլիկ գետի երկարութեամբ, կազմում են մի տեսակ բնական կօրիդօր, որ կոչվում է Խէրթվիսի կիրճ։ Խէրթվիս առաջ է գալիս էրթվիս բառից, որ վրացերէն նշանակում է միութիւն, վասն զի կիրճի մէջ միաւորվելով երկու գետակներ սկսում են Թիֆլիսի ծծմայր Կուր գետը։ Այս միաւորութեան տեղը ինձ յիշեցրեց Քէօփրի-քէօյի մօտ միմեանց պատահող երկու ջրեր, որ բղխելով Բիւրանեան (բին գէօլի) սարերից խառնվում են միատեղ և կազմում Արաքս, բայց ուր Արաքսի վրա կարմիր քարից կապած եօթը կամար հոյակապ կամուրջը և ուր այստեղի փայտեայ շինուածքը, որի վրայից մեծ երկիւղով կարելի է անցնել գետի վարար ժամանակը։ Զը նայելով դորա, Կուր գետը այնչափ աւանդական է վրաց ազգի համար, որչափ Արաքսը հայերի. դոցա երկուսի անուան հետ միակերպ կապված են հարիւրաւոր պատմական անցքեր և հարուածներ, հարիւրաւոր տխուր յիշատակներ և արիւնալից գործեր. երկուսի խոխոջման մէջ ևս տեսնում են ազգային բանաստեղծները իրանց լաց ու հեծեծանքը....

Կիրճի մէջ միաւորվող գետակների վրա հիմնված է, ինչպէս Քէօփրի-քէօյը, Խէրթվիս գիւղը, որի պտղալից այգիները ձգվում են Կուրի երկու եզերքով մօտ երեք վերստ տարածութիւն։ Նոքա այնչափ յայտնի են անուանի միրգերով, որ Վլադիկավկասից անդամ վաճառականներ են գալի այդ տեղ տանձ, խնձոր, չորացրած թութ և ընկոյզ առնելու։ Թթի ծառերը լիքն էին ճանապարհի վրա և որովհետև վճռած էր քիչ կանգնել գիւղի մօտ նախաճաշիկ անելու համար, վասնորոյ ես իսկոյն վազեցի դէպի մի ծառ, որի վրա փայլում էին սպիտակ հատիկներ։ Մատաղահաս մի կին մեսաքսեայ շքեղ հագուստով լուանում էր բազուկները նորանից քիչ հեռու, երևում էր որ նա մահմեդական էր և նամազի էր պատրաստվում։ Զուգենալով խանդարել հարեմականի անմեղ զբաղմունքը ես ձևացայ իբր թէ նորան չեմ տեսնում, բայց զուր զգուշութիւն. կրքամոլ հուրին խսկոյն նետեց վրան իր խարդախ աչքերը, կարծես ծաղրելով մտքի մէջ, երբ մի զինուորական դեսվուր ուզում էր սառնասիրտ երևալ դէպի նորան, վասնորոյ արդարացի առիթ տուաւ ինձ մի կօմպլիմէնտ ուղարկել նորան, որի համար կանայք ամենևին չեն անիծում մարդուն...Այդ ժամանակ դուրս եկաւ տանից մի բարձրահասակ աղամարդ որ հաւանօրէն տան էֆէնդին էր։ Կինը խսկոյն ծածկվեց, իսկ ես շարունակեցի զբաղվիլ թթով, մի նշան անդամ չը յայտնելով իմ հետաքրքրութեան առարկայի վրա։ Երբ նա մօտեցաւ ինձ, կասկածը փարատելու համար, ասացի թէ, տեսնելով այդչափ շքեղ թթենիներ, ես յիշեցի իմ հայրենիքը, որը շատ հարուստ է այդ ծառերով և չը կարողանալով զսպել իմ կարօտը, ուզեցի փորձել նոցա պտուղը, որի համից զրկված եմ արդէն տասը տարի։ Հիւրասէր մուսուլմանը խսկոյն շարժվեց իմ խօսքերից և դուրս կանչելով իր սիրուհուն հրամայեց որ մի պղնձէ պնակի վրա թութ պատրաստէ ինձ համար։ Նա մեծ պատրաստականութեամբ վազեց յանձնարարութեան ետևից ցոյց տալով ինձ մի խորամանկ ժպիտ։—Ախ, էֆէնդի, սիրաս վառեցին քո խօսքերը, ասեց զգայուն տանտիկը, մինթէ տասը տարի է որ չես տեսել քո հարազատների երեսը։—Այո, ամբողջ տասի տարի է։—Երևի դու հայ ես, էֆէնդի, և ամօթ չը լինի հարցնել որ տեղից արդեօք։ Խսկոյն լիացրի նորա հետաքրքրութիւնը։ Հա, Նուխին լաւ եմ ճանաչում, ասեց նա, այն տեղ շատ աբրեշում է դուրս գալիս։—Այո, ճիշտ է։—Վալլահ, էֆէնդի, հայ տեսնելիս ես մի առանձին համակրութիւն եմ զգում դէպի նորան, կարծես հայերը ազգական լինեն մուսուլմանների հետ։—Ինչ է քո ազգանունը հարցրեցի նորանից։—Կավտարաձէ է իմ ազգի անունը։—Ուրեմն քո նախնիքը կամ հայրը վրաց ազգից փոխված են, վստահոյ զարմանալի է որ վրացիներին թողած հայերին ես համակրում։—Մինթէ հնար է համակրել այնչափ բիրտ և կոպիտ մարդկերանց, էֆէնդիմ հէզրէթլէրի, պատասխանեց նա անկեղծ զգացմունքով։ Երևում էր որ նա շատ էր յարաբերութիւն ունեցել այդ երկու ազգերի հետ, որոնք յիրաւի մեծ տարբերութիւն են ներկայացնում իրանց վարքով և բնաւորութեամբ։ Խօսքս ի հարկէ թիֆլիսցիների վրա չէ, որոնցից ոչ հայն է հայի նման, ոչ վրացին վրացու....

Մուսուլմանների համեմատաբար աւելի համակրութիւնը դէպի հայերը ամենուրեք է. նա առաջ է գալի նոյնչափ հայերի վարվող և օտարների հետ մեղմ բնաւորութիւնից, որչափ և նոցա լեզուագիտական ընդունակութիւնից. լեզուագիտութիւնը մուսուլմանների նման մոլեռանդների աչքում արդէն կէս մուսուլմանութիւն է, վասն զի մահմեդականի խօսող լեզուն լիքն է այնպիսի ֆրազներով և դարձուածներով, որոնք կրում են կրօնական և դօղմատական բնաւորութիւն. նոցա իմանալը և արտայայտելը ի հարկէ փաղաքշում է կարճամիտների սիրտը։ Մինչդեռ միւս ազգերը արևելքում, ինչպէս օրինակ, վրացիք Կովկասում, ասորիք Պարսկաստանում ու յոյները Փոքր-Ասիայում չեն կարող հայերի չափ պարծենալ լեզուագիտական շնորհով։ Մինթէ հայերի այս թանկագին ձիրքը և բնաւորութեան յատկութիւնները պիտի արհամարհէ Անգլիան, երբ նա ցանկանում է լուսաւորութիւն սփռել Արևելքում. մինթէ նա չէ տեսնում որ օրէնսդրական յեղափոխութիւնները Պարսկաստանում, Եգիպտոսում և Թուրքիայում այժմ ևս հայերի ձեռքով են կատարվում. բոլորին յայտնի Նուբար-փաշան, Լօնդոնի պարսկական դեսպան Միրզա Մելքում խանը, որին յանձնած է արդէն ուսումնասիրել եւրօպական կոդէքսները մի նոր օրէնսդրական կանոնադրութիւն կազմելու Պարսկաստանի համար, Միղհատի մշտական մէնտօր և նորա տված սահմանադրութեան ներշնչող Օղեան—էֆէնդին և շատ ուրիշները թող

այս քահանաների յուղարկաւորութեան և թաղման ժամանակը. և ոչ թէ Զմչկեանց Առաքել քահանայի որը սխալմամբ էր տպագրած։ Այժմ գեր. հայր սուրբը հրապարակաւ կը խոստովանի որ իրան չողջորթողները չարաչար սխալացրել են իրան, որովհետև դրանց թաղման ժամանակ հայր սուրբը Թիֆլիսում չէր գտնվում։

Յովհաննէս աւագ քահանայ Սարգսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Աբասթուման, օգոստոսի 31

Խորը համոզված լինելով որ ամեն մի հայի պարտականութիւնն է իր կարողութեանը չափ նըպաստել Տաճկաստանի հայերի ուսումնարանական,—հետևապէս նրանց յառաջադիմութեան գործին և միանգամայն համակրելով Կ. Պոլսում կազմված՝ Արարատեան, Արևելեան-Դպրոցասիրաց և Կիլիկեան ընկերութեանց ազնիւ գործին, ես միտք յղացայ այստեղ՝ Աբասթուման, ուր ժողովուրդը հաւաքվել է զանազան քաղաքներից ջերմուկներում իրանց առողջութիւնը վերականգնելու,—մի ստորագրութիւն բանալ թէ ծանօթներիս, թէ անծանօթներիս մէջ նուիրատուութիւն ժողովելու՝ այն միտքը ինձ առաջնորդ ունենալով թէ հայը՝ ամեն տեղ, ամեն դրութեան մէջ պարտական է մտածել և գործել Տաճկաստանի մեր եղբարց բարորութեան համար, որոց հետևանքը եղաւ ահա հարիւր տասնվեց ր. յիսուն կ.։ Այս նամակիս հետ ծրարեալ պատիւ ունեմ ձեզ ուղարկելու և խնդրել նուիրատուաց ազգանունները տպագրելով մի անկիւն չնորհէք ձեր պատուական լրագրի մէջ և ստացեալ գումարը հասցնէք վերոյիշեալ երեք ընկերութեանցը, որով նախապէս կը խնդրեմ ընդունել յարգանաց հաւաստիքը։ Միքայել Տէր-Միքայէլեանց 20 ր., Բուղդան Խուդաւերդեանց նախիջևանցի 3 ր., դրամագառ Զաք. Գրիգորեանց 5 ր., Աւետիս-Վարդապետեանց 3 ր., Աղէքսանդր Միրաքեան 2 ր., Աղանիկ Սողոմոնեանց 1 ր., Քերովբ Տէր Պողոսեանց 1 ր., Տիգրան Մէլիքնճեանց 1 ր., Աղէքսանդր Ապասեանց 3 ր., Սարգիս Կարապետեան Տէր-Ակոբեանց 2 ր., Մկրտիչ Խաչատուրեանց 1ր., Տրդատ Մելիքեանց 1 ր., Պէտրէ Ակիմով 50 կ., Մըկրտիչ Վարդապետեանց 5 ր., Առաքել Մելքոնեանց 1 ր., Ար. Մ. Աղամանեանց 10 ր., Տէր-Ստէփանեանց 3 ր., Ն. Նորգոնեանց 3 ր., Ջանչեանց 1 ր., Петръ Ходжаевъ 1 ր., Աղէքսանդր Ջանիել 2 ր., Կարապետ Ցարութիւնեանց 1 ր., Տիկին Եկատերինէ Օհանջանեանց 5 ր., Ցարութիւն Բայատրեանց Քալաֆեանց 1 ր., Կ. Ցարութիւնեանց 3 ր., Ցակոբ Տիգրանեանց 2 ր., Վ. Զինկարեանց 1 ր., Երիցուհի Դէլոյ Աղաջանեանց 5 ր., Աննա Հազարապետեանց 3 ր., Николай Залиновъ уплочено 5 ր., Եփրեմ Դեհկարխանով 3 ր., Տիկին Աննա Բօեարդինեանց 2 ր., Մկրտիչ Ալիխանեանց 5 ր., Ստեփանոս Փարսադանեանց 2 ր., Անյայտից 1 ր., Տիկին ոմն 2 ր., Գրիգորիս Նահապետեանց 1 ր., Степанъ Унановъ докторъ 5 ր.։ Գումարն է 116 ր. 50 կ.։

Միքայէլ Տէր-Միքայէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հոկտեմբերի 21-ին և 22-ին լինելու են ԹԻՖԼԻՍՈՒՄ ձիարշաւներ (скачки)։ Ձիաների ներկայացնելը ձիարշաւը անօրինող վարչութեանը լինելու է 18-ին և 19-ին հոկտեմբերի, իսկ նրանց քննութիւնը նշանակված է նոյն ամսի 20-ին։ Տեղեկութիւնների համար կարելի է դիմել Սերգիևսկայա փողոց, Զիթախովի տուն, որտեղ գը տընվում է Управленіе Кавк. Конно-завод. окр անուանված վարչութիւնը։

—

Երկուշաբթի սեպտեմբերի 17-ին մեռելոցի տօնի պատճառով տպարանում չեն աշխատում. «Մշակի» հետևեալ համարը կը դուրս գայ չորեքշաբթի սեպտեմբերի 19-ին։

—

Երէկ, սեպտեմբերի 14-ին ուղարկեցինք Ս. Պետերբուրգի գեղարուեստական ակադեմիայի ուսանող պ. Ց. Շամչեանին ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ ստացված 100 ռուբլի։ Շնորհակալութիւն ենք յայտնում Ախալքալաքի երիտասարդներին նրանց մեզ ընծայած հաւատարմութեան համար։

—

ԼԵՆԿՕՐԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ ցորենի խալվարը (25 պուդ), որ առաջ 10 ռուբլիով էր ծախվում, այժմ 30 ռուբլ արժէ. գարու խալվարը առաջ ծախվում էր 5—6 ր., իսկ այժմ 20 ռուբլ արժէ։

—

Մեզ հաղորդում են ԼԵՆԿՕՐԱՆԻՑ, որ հայ տեղացիք թէ տղամարդիկ և թէ կանայք ամօթ են համարում իրանց մայրենի լեզուով խօսել։ Ամօթ լենկօրանցիներին, որ այդքան յետ են մնացել։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Արարատ» ամսագրի օգոստոսի տետրակում կարդացինք, որ Ս. Էջմիածնի սինոդը մայիսի 20-ին անօրինել է մի քննիչ ուղարկել Զարեքայ վանքը, վանահօր գործողութիւնները քննելու համար։ Մինչև այժմ Ս. Էջմիածնից ոչ մի քննիչ չէ եկել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԷՐԻԿԱ

—

«New-York Herald» լրագրի Թղթակիցը Իսկօհամայից (Ճապոնիայում) Վէգայի հիւսիսային արշաւանքի մասին մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում. պարոն Թղթակիցն անձամբ տեսնվել է Նորդէնսկիօլդի հետ, որը նրան պատմել է մանրամասնաբար բոլոր իրանց ճանապարհորդութիւններն ու խուզարկութիւնները և առհասարակ բոլոր այն հետաքրքիր արկածները որոնցից բնաւ զրկված չէ մի այդպիսի հրկայական արշաւանք. Մարդիկ միշտ սիրում են տարերքների դէմ մենամարտել, և դրանից առաջացած արկածները մարդս ամենաքաղցր հաճութեամբ է լսում, մարդուս համար մի և նոյնն է թէ նաւը խորտակվեց, և նրա եղբայրակիցները զոհ գնացին հեղուկ տարրի սառցապատ ալիքներին, թէ ընդհակառակը մարդիկ ստոյիկեան սառնասրտութեամբ և անգլիական յամառ յանդգնութեամբ դիմադրաւեցին ընութեան ահռելի սպառնալիքներին և հետևեալ կամ մի քանի տարուց յետոյ, յաղթական պսակով վերադարձան իրանց հայրենիքը...

Խօսենք այդ հռչակաւոր արշաւանքի մասին. պ. Նորդէնսկիօլդի խօսքերին նայելով «Vega» մեկնելով Գօթէմբուրգից, 4 օրից յետոյ հասաւ Տրօմզօէ, ուր նա վերցրեց մուշտակների և ուրիշ անհրաժեշտ առարկաների հարկաւոր եղած պաշարը։

Վէգատ կոչված կղզուց մինչև բուն ցամաքը արշաւանքը ոչինչ սառոյցների չը պատահեց։ Անցնելով Կարայեան բաց ծովը, նա չորս օրից յետոյ հասաւ Դիկսոնեան նաւահանգիստը։ Ենիսէյն անցնելուց յետոյ, արշաւանքն ուղղեց իր ընթացքը դէպի հիւսիս-արևելք. այդտեղ սառոյցները մի առ ժամանակ արգելեցին նրա ընթացքը։

Չորս օրից յետոյ, «Վէգա» հասաւ Տաժուայր, իսկ օգոստոսի 19-ին, նա արդէն գտնվում էր Ցէյսկին, որ Ասիայի ամենախոր հիւսիսային գօտին է. նա այդ տարածութեան վրա մի քանի օր դադարեցրեց իր ընթացքը. սրանից յետոյ նա շարունակեց իր ընթացքը և իր այդ նոր ճանապարհորդութեան միջոցին, նա շատ սառոյցների չը պատահեց։

Օգոստոսի 26-ին նա, անցնելով Լէնայի գետաբերանը, ուղղեց իր ընթացքը դէպի Սիբիրեան նոր կղզիները, բայց սառոյցներն արգելք եղան վէգանաւորդներին մօտենալու այդ կղզիներին։

Կօլինա գետաբերանն անցնելուց յետոյ, Վէգանաւորդեան արշաւանքն արդէն գտնվում էր հիւսիսային բացարձակ ովկիանոսում. այստեղից արդէն սկսվում են արշաւանքի ամենանայողութիւնի ու ամենադժուար արդիւնքներն ու վտանգները, որոնք գնալով աւելի ու աւելի անտանելի էին դառնում։

Ահա թէ ինչ են պատմում արշաւանքի անդամները։

«Մենք, ասում են նրանք, Կօօկ-Վանկարէմա հրուանդանի մօտ սառոյցների պատճառով ըզգալի կերպով ուշացանք, բայց 27-ին մենք հասանք Կօլինչէն, ուր հէնց հետևեալ օրից մենք պաշարվեցանք սառոյցներով։ Զեկչի, որ գտնվում է հիւսիսային ամենաբարձր լայնութիւնների մի որոշեալ աստիճանի վրա, շրջապատված է մշտնջենական սառնամանիքներով։ Մեզ էլ վիճակվեցաւ այդ հեռաւոր անծանօթ երկրի մօտ անցկացնել ամբողջ ձըմեռը. մենք հնազանդեցանք մեր ճակատագրին և Զեկչիից մի մղոն հեռաւորութեամբ, շրջապատված սառոյցներով անց կացրինք ձըմեռը։ Մեր մէջ ոչ մի հիւանդ չը կար, ամենքս էլ քաջառողջ էինք։ Ամենակարճ օրերը միայն երեք ժամ տևողութիւն ունէին. և այդ բոլոր ժամանակամիջոցում մեզ հաղիւ թէ յաջողում էր տեսնել արեգակի մի քանի թոյլ ճառագայթները։ Մենք բաւական ժամանակ ունէինք գիտական և տեղագրական հետազօտութիւններ անելու։

«Մօտ 4,000 տեղացիներ, որոնք ծանօթ են Զեկչի անունով, և որոնք, բնակվելով զանազան գիւղերում, կերակրվում են ձըկներով. այդ բնակիչները մեզ մատակարարում էին զանազան պաշարեղէններ և ուրիշ անհրաժեշտ առարկաներ։

«Մենք այնտեղ գտանք բազմաթիւ արջեր և կերս մեծ բաւականութեամբ, ինչ հիանալի է վերջանում, յիրաւի, կեցցէ Արտաչէսը այդ վարմունքի համար։ Այստեղ հետևեց մի մեծ պատերազմ, որի ժամանակ ես թռայ մոտով Հայաստանի ծոցը Հասան-Ղալայի մօտ, ուր ընկերակցում էր ինձ Էրզրումից երկրորդ անգամ վերադառնալուս ժամանակ գերամեծար Ստեփաննոս եպիսկոպոսը։ Նա հռոմէական հայերի առաջնորդն է Էրզրում և այնչափ քաջ հմուտ է Հայաստանի պատմութեան և հնութիւններին, որ նորա ամեն քայլափոխը նա ճանաչում է կարծես դարևոր անցքերին միշտ ժամանակակից եղած մարդ։ Երբ անցնում էինք Հասան-Ղալայի մօտից սրտաճմլիկ զգացմունքով, որով թողնում էի Հայաստանը, պերճախօս հովիւը, ինչպէս միմեոր, խօսում էր հայրենեաց տարերքութիւնը, տարածելով ձեռքերը, ներշնչված, ամեն սարին, ամեն բլուրին, որ երևում էր առաւօտեան չքեղ հորիզոնի վրա։ «Տես, ասում էր նա, այն սարը, որ կոնուսաձև բարձրանում է միւսների մէջ. նա Բիւրակնեան լեռների չղթաներին է պատկանում և իր լերկութեան համար տաճիկներից Քէօսա-Դաղ է կոչվում, նա հին Սիւկաւէտ սարն է, որի ստորոտում ճգնվել են Սուքիասեանք, որ Սաթինիկի հետ Հայաստան դալով ընդունել են քրիստոնէութիւն և հեռացել այդ տեղ աշխարհի փառքից և վայելչութիւնից։ Նոցա առաջնորդը, որ առաջ Բահադրաս է կոչվելիս եղել ու յետոյ Սուքիաս, Սաթինիկի հօր բանակում լաւ հրամանատարներից մէկն է համարվել. նայիր, որդիս և մի մոռանար այդ բնական արձանի պատկերը։» Եւ ահա մի տարից յետոյ, երբ նորոգվեց կրկին Սաթինիկի յիշատակը, աչքիս առաջ կարծես ներկայացաւ եռանդոտ եպիսկոպոսի հաճելի պատկերը Հայաստանի պայծառ ընութեան մէջ։—Ինչի վրա էք մտածում, հարցրեց գնդապետը, նկատելով իմ մէջ մի յանկարծակի փոփոխութիւն։—Ո՛, շատ հեռու էի այս բոպէիս Ալ-դր Բ-ից։—Երևի ուրիշ մի անգամ ևս յիշեցիք հայոց պատմութիւնից, որ պատահել է Կուրայի ափերում, պատմեցէք խնդրեմ, շատ հաճելի է ինձ։—Ո՛չ Կուրայից շատ հեռու էի և ուրիշ բանի վրա էր միտքս։—Նայեցէք ուրեմն այս տեսարանին, որ այսչափ չքեղ ներկայանում է մի ապառաժացած ընութեան մէջ։ Ահագին բարձրութեան վրա բացվեց մեր աչքի առաջ մի սիրուն լիճ, որը պատկերացնելով կարելի էր նմանացնել միայն բանտարկած գեղեցկուհուն, որի բոլոր հրապոյրքը ծածկած են մնում լոկ սերայլի ստուար պատերի մէջ. դալարազարդ լիճը սեղմված էր չորս կողմից բարձր շրջանակով, որը ծածկում է նորան մարդու աչքից, ինչպէս յաւերժահարսնի կախարդական երես....—Այո, Ալ-դր Բ-ից, յիրաւի խիստ զմայլեցնում է ժայռերի մէջ այս տեսակ պատկեր, բայց նայեցէք թէ ինչ բարձրութիւնից են իջնում մարդիկ, որ այստեղից լիլիպուտների փոքրութեամբ են երևում մեզ, նոքա ուխտաւորներ են, որոնց շուտով կը պատահենք Վարձնի տաճարում։ Այդ ժամանակ նկատեցինք որ ճանապարհն էլ անմատչելի է դառնում կառքի գնացքի համար, վանորոյ կանգնելով մօտակայ գիւղի հանդէպ, վճռեցինք մնացած տեղը ոտով անցնել։ Ուխտաւորների խիտ խիտ դասերը լցնում էին ճանապարհը, որը միացնում էր այդ տեղ մի քանի կողմ տանող շավիղներ։ Ուխտաւորները գրեթէ ամենքն էլ կանայք էին։ Սիրալիր գնդապետը ուշի ուշով բարևում էր վրացերէն իւրաքանչիւրին, բայց ոչ մէկից պատասխան չէր ստանում. կարծես ամենքն էլ թշնամի լինէին մեզ, որ վերաբերվում էին այդչափ դաժան համբութեամբ։ Զը վհատելով այդ անյաջողութիւնից, ես փորձեցի հայերէն խօսել վայրենի ուխտաւորների հետ, որոնց մէջ ապացոյց լինեն ամենքի համար։ Բայց հեռացա նեմիթից. մեր խօսակցութիւնը շարունակվում է վրացաղը մուսուլմանի հետ։—Ո՞րչափ բնակիչ ունէ Խէրթվիս գիւղը և ինչ ազգեր են, հարցրեցի նորան։—Երեք հարիւր տուն բնակիչ կայ այս տեղ, որոնցից քսան տունը հայ է, իսկ մնացածը մահմետական։—Ունենալով այդչափ բերքեր, բաւական հարուստ պիտի լինեն ձեր գիւղացիք։—Այո՛, առհասարակ ունևոր են, բայց հարստութիւնը հայերի ձեռքին է։—Ի՞նչ պատճառով, երբ նոքա այդչափ քիչ են։—Էֆէնդի, հայերը խիստ տոկուն են աշխատութեան մէջ, մուսուլմանները նոցա չեն կարողանում հասնել։—Դա բացառական երևոյթ չէ, ասեցի նորան, այդ յատկութիւնը նոցա կցորդում է ամեն տեղ։ Սորանով վերջացրի նորա հետ, համբուրելով նորա խարտեաշ մանուկը, որ բոլոր ժամանակ գիրկս էր դիմում. հեշտասէր մայրը շարժեց գլուխը նոյն հրապուրիչ ժպիտով....

Մօտեցայ բատարէին, որ այդ ժամանակ հագիստ էր առնում ձիաների սանձը արձակած և ահա մի նոր սիւրպրիզ. բատարէի հրամայող գնդապետ Բ-եվ առաջարկեց ինձ գնալ նորա հետ Վարձնի վանքը, որի տօնին մեծ բազմութիւն պիտի հաւաքվէր այդ օր։ Հաճելի էր ինձ նորա առաջարկութիւն, վասն զի այդ վանքի մասին շատ էր խօսել ինձ Ախալցխայում այժմ հիւր պ. Ս. Գօգոբերիձէ։ Շատ ժամանակ չէ որ գիմնազիայում պատմութեան ուսուցիչ էր նա, նորան յարգում էի ինչպէս և այժմ։ Ճանապարհ գցելով բատարէան մի ժրագլուխ կապիտանի հետ, նստեցինք կառք և դիմեցինք մեր նպատակին։—Դիտէ՞ք Ալ-դր Բ-ից, ինչ դեր է խաղացել այս կիրճը վրաց և հայոց պատմութեան մէջ, ասեցի պատուարժան ընկերիս։—Հայոց պատմութեան վերաբերմամբ չը դիտեմ նորա կատարած դերը, իսկ Վրաստանին գալով ակներև է որ այս կիրճը նորա գլխաւոր դռներից մէկն է եղել ապատակութիւնների ժամանակ։ Ինչպէս ապացոյց իր ասածին, նա ցոյց տուաւ մի ամբողջ կարգ աւերակ բերդերի, որ կպցրած էին սարերի գլխին ինչպէս ծիծեռնակի բոյն բարձր պատի վրա, նոքա բոլորն էլ կրում են այժմ թամար թագուհու անունը։ Այս թագակիր գիւցազնուհին այնչափ անուանի է վրաց պատմութեան մէջ, որ Աջարստանից սկսած մինչև այս կողմերը ինչ հին բերդեր տեսնես՝ բոլորն էլ նորա անունն են կրում։—Այս կիրճը, որին բաժանում է Կուրան, քանիցս դար եղել է սահմանագլուխ Հայաստանի և Վրաստանի մէջ և հայոց Արտաշէս թագաւորը այս գետի ափերումն է կատարել իր պատմական բօմանը արքայադուստր Սաթինիկի հետ, ասեցի ընկերիս։—Ի՞նչպէս, հարցրեց գնդապետը հետաքրքրութեամբ, ում աղջիկն է եղել Սաթինիկը և ինչպէս է պատահել այս տեղ Արտաշէսի հետ։ Խորենացու համեմատ ես պատմեցի նորան Արտաշէսի կռիւը լեզգիների թագաւորի հետ Կուր գետի ափերում, ուր գերելով թագաւորի որդուն, ազատում է նորան նորա քոյր Սաթինիկի խնդիրքով, որը վարելով Արտաշէսի հետ իր բանակցութիւնները գետի միւս ափից, այնչափ հիացնում է երիտասարդ հերոսին, որ ճեղքելով ջուրը իր սևաթոյր ձիու վրա յափշտակում է Սաթինիկին ինչպէս արծիւ մի թոյլ աղաւնեակ։—Ո՛, միթէ, բացականչեց գնդապետը անհամբերութեամբ, յետո՞յ, յետո՞յ։—Յետոյ դորանով էլ վերջանում է արիւնահեղ թշնամութիւնը երկու բանակների մէջ, որոնցից հայկական բանակը տանում է Սաթինիկին ինչպէս Հայաստանի թագուհի, ուներնալով նրան ուղեկից նորա հօր հաւատարիմներից չասերին։—Հա՛, հա՛, հա՛, հա՛, կարկաչեց ընկերս մեծ բաւականութեամբ, ինչ հիանալի է վերջանում, յիրաւի, կեցցէ Արտաչէսը այդ վարմունքի համար։ Այստեղ հետևեց մի մեծ պատերազմ, որի ժամանակ ես թռայ մոտով Հայաստանի ծոցը Հասան-Ղալայի մօտ, ուր ընկերակցում էր ինձ Էրզրումից երկրորդ անգամ վերադառնալուս ժամանակ գերամեծար Ստեփաննոս եպիսկոպոսը։ Նա հռոմէական հայերի առաջնորդն է Էրզրում և այնչափ քաջ հմուտ է Հայաստանի պատմութեան և հնութիւններին, որ նորա ամեն քայլափոխը նա ճանաչում է կարծես դարևոր անցքերին միշտ ժամանակակից եղած մարդ։ Երբ անցնում էինք Հասան-Ղալայի մօտից սրտաճմլիկ զգացմունքով, որով թողնում էի Հայաստանը, պերճախօս հովիւը, ինչպէս միմեոր, խօսում էր հայրենեաց տարերքութիւնը, տարածելով ձեռքերը, ներշնչված, ամեն սարին, ամեն բլուրին, որ երևում էր առաւօտեան չքեղ հորիզոնի վրա։ «Տես, ասում էր նա, այն սարը, որ կոնուսաձև բարձրանում է միւսների մէջ. նա Բիւրակնեան լեռների չղթաներին է պատկանում և իր լերկութեան համար տաճիկներից Քէօսա-Դաղ է կոչվում, նա հին Սիւկաւէտ սարն է, որի ստորոտում ճգնվել են Սուքիասեանք, որ Սաթինիկի հետ Հայաստան դալով ընդունել են քրիստոնէութիւն և հեռացել այդ տեղ աշխարհի փառքից և վայելչութիւնից։ Նոցա առաջնորդը, որ առաջ Բահադրաս է կոչվելիս եղել ու յետոյ Սուքիաս, Սաթինիկի հօր բանակում լաւ հրամանատարներից մէկն է համարվել. նայիր, որդիս և մի մոռանար այդ բնական արձանի պատկերը։» Եւ ահա մի տարից յետոյ, երբ նորոգվեց կրկին Սաթինիկի յիշատակը, աչքիս առաջ կարծես ներկայացաւ եռանդոտ եպիսկոպոսի հաճելի պատկերը Հայաստանի պայծառ ընութեան մէջ։—Ինչի վրա էք մտածում, հարցրեց գնդապետը, նկատելով իմ մէջ մի յանկարծակի փոփոխութիւն։—Ո՛, շատ հեռու էի այս բոպէիս Ալ-դր Բ-ից։—Երևի ուրիշ մի անգամ ևս յիշեցիք հայոց պատմութիւնից, որ պատահել է Կուրայի ափերում, պատմեցէք խնդրեմ, շատ հաճելի է ինձ։—Ո՛չ Կուրայից շատ հեռու էի և ուրիշ բանի վրա էր միտքս։—Նայեցէք ուրեմն այս տեսարանին, որ այսչափ չքեղ ներկայանում է մի ապառաժացած ընութեան մէջ։ Ահագին բարձրութեան վրա բացվեց մեր աչքի առաջ մի սիրուն լիճ, որը պատկերացնելով կարելի էր նմանացնել միայն բանտարկած գեղեցկուհուն, որի բոլոր հրապոյրքը ծածկած են մնում լոկ սերայլի ստուար պատերի մէջ. դալարազարդ լիճը սեղմված էր չորս կողմից բարձր շրջանակով, որը ծածկում է նորան մարդու աչքից, ինչպէս յաւերժահարսնի կախարդական երես....—Այո, Ալ-դր Բ-ից, յիրաւի խիստ զմայլեցնում է ժայռերի մէջ այս տեսակ պատկեր, բայց նայեցէք թէ ինչ բարձրութիւնից են իջնում մարդիկ, որ այստեղից լիլիպուտների փոքրութեամբ են երևում մեզ, նոքա ուխտաւորներ են, որոնց շուտով կը պատահենք Վարձնի տաճարում։ Այդ ժամանակ նկատեցինք որ ճանապարհն էլ անմատչելի է դառնում կառքի գնացքի համար, վանորոյ կանգնելով մօտակայ գիւղի հանդէպ, վճռեցինք մնացած տեղը ոտով անցնել։ Ուխտաւորների խիտ խիտ դասերը լցնում էին ճանապարհը, որը միացնում էր այդ տեղ մի քանի կողմ տանող շավիղներ։ Ուխտաւորները գրեթէ ամենքն էլ կանայք էին։ Սիրալիր գնդապետը ուշի ուշով բարևում էր վրացերէն իւրաքանչիւրին, բայց ոչ մէկից պատասխան չէր ստանում. կարծես ամենքն էլ թշնամի լինէին մեզ, որ վերաբերվում էին այդչափ դաժան համբութեամբ։ Զը վհատելով այդ անյաջողութիւնից, ես փորձեցի հայերէն խօսել վայրենի ուխտաւորների հետ, որոնց մէջ

եղջերուներ: Ցուրտը սաստիկ էր. միջին թըւով 36° աստիճան զրօից ցած Ցէլսի ջերմաչափով: Թռչուններն առատ են, և գարնան մօտերքը մեզ յաջողում էր շատ վայրի հաւեր որսալ:

«Շարունակ 264 օր մենք պաշարված էինք առոյցներով. վերջապէս նա կոտրվեց, և յուլիսի 18-ին մենք ճանապարհ ընկանք հսկայական երերուն լեռների միջով, և մի քանի օրից յետոյ մենք առանց որ և է արգելքի անցանք Բէրինգեան նեղուցը:

«Եւ այսպէսով մենք հասանք մեր նպատակին, և մեր անձնական փորձով ապացուցինք, որ այդ անցքը ճանապարհորդութեան համար ոչինչ դժուարութիւններ չէ ներկայացնում, այլ ընդհակառակը նա շատ յարմար է այդ նպատակի համար:

«Սրանից յետոյ հեռանալով ասիական ափերից, մենք հասանք Ամերիկայի Սուրբ Լաւրէնտիոսի ծոցը և յետոյ Կլարէնցիայի նաւահանգիստը. սրանից յետոյ մենք վերադարձանք Կօնիօ, և բոլոր այդ ճանապարհորդութեան ժամանակ մենք միշտ չափում էինք ծովի յատակը, և միշտ նորանոր փորձեր էինք անում ջրի յատակի դրութեան մասին մի ճիշդ գաղափար կազմելու. և այդ շատ հարկաւոր է մանաւանդ նրա համար, որովհետև այդ այն կէտն է, ուր միանում են Հիւսիսային և Խաղաղական երկու մեծ ովկիանոսները:

«Ճանապարհին մենք հանդիպեցանք Սուրբ-Լաւրէնտիոս կղզուն, որից յետոյ մենք այցելեցինք Բէրինգեան կղզին, ուր առաջին անգամ մենք լուրեր ստացանք Եւրօպայից, որոնց մեզ հաղորդեց Ալասկայի առևտրական ընկերութեան այնտեղի գործակատարը:

«Բացի այս՝ մենք այդտեղ գտանք մի ծովային հրէշի կմախք, որը հանել են զետնից. ենթադրում են, որ դա պէտք է լինի Rhyfhnia stettari կոչված կենդանու կմախքը:

«Օգոստոսի 19-ին մենք հեռացանք այդ կղզուց, և մինչև ամսի 31-ը ճանապարհորդութիւնը շատ յաջող և շատ զուարճալի էր: Այդ օրը մի սարսափելի փոթորիկ բարձրացաւ. կայծակը խփեց մեր նաւին, նաւը դրանից մի թեթև վնաս կրեց, բայց մեր մարդկերանցից մի քանիսը վիրաւորվեցան:

«Վերջապէս սեպտեմբերի 2-ին, երեկոյեան ժամը տաս և կէսին, մենք ողջ և առողջ հասանք Իոկօհամա. բոլոր ճանապարհորդութեան միջոցին արշաւանքի անդամներից ոչ ոք չը մեռաւ: Վէգա առաջին նաւն է, որ կատարեց այս ճանապարհը:»

Պրոֆէսսոր Նորդէնսկիօլդը կարծում է, թէ երբ որ փոքր ինչ էլ աւելի լաւ կը ծանօթանան Հիւսիսային ծովերի հետ, այն ժամանակ Բէրինգեան անցքի երթևեկութիւնն այլ ևս ոչինչ դժուարութիւն չի ներկայացնի, և կարելի կը լինի այնտեղով առանց ամենափոքր վտանգի անգամ անցնել:

Նա ասում է, որ Ճապօնիայից մինչև Լէնա շատ ու քիչ փորձված նաւաստին ոչինչ այնպէս առանձին նշանաւոր դժուարութեան չի պատահի. իսկ այդ անցքը, պատուելի պրոֆէսսորի կարծիքով մեծ առևտրական նշանակութիւն ունի: Վէգան 14 օր կը մնայ Իոկոհամայում:

Ռուսաց «Nordenskiold» կոչված նաւը, որ ուղարկված էր Վէգանաւորդեան արշաւանքի օգնութեան նրա պաշարված ժամանակ, օգոստոսի 5-ին խորտակվեցաւ Իէդդօի մօտ: Նաւորդներն ազատվեցան:

ԱՆԳԼԻԱ.

—

Դեռ զուլուսների պատերազմը մի օրինաւոր վերջ չը ստացած՝ ասում են, որ սէր Գարնէտ-Վօլզէլէյ արդէն մտադիր է գաղթականական ժողովին Տրանսվալի և Գրիքալանդի միացնելու մասին մի ծրագիր առաջարկել: Բայց դեռ ոչինչ յայտնի չէ, թէ ինչպէս են կամենում վարվել Զուլուլանդայի հետ:

Չը նայելով այն մեծ բաւականութեանը, որ յայտնում են պետական լրագիրները, այնուամենայնիւ դեռ մեծ զանազանութիւն կայ բոլորովին վերջացած և գրեթէ վերջացած խօսքերի մէջ: Դժուար թէ կարելի լինէր դրականապէս ասել, որ Կապի Ցուզուրթային ամեն բան յաջողված է: Պէտք է դէպի ամենամեծ յաջողութիւնն անգամ փոքր ինչ կասկածոտ լինել. ամենամեծ զգուշութիւնը մանաւանդ հարկաւոր է հէնց նոյն իսկ այն ժամանակ, երբ բաղդը մարդուս ամենաքաղցր զոյներով է ժպտում:

Պատմում են, որ հարևան ցեղերը հիացած են սէր Գարնէտ-Վօլզէլէյով. նա մի այնպիսի հեղինակութիւն ունի բոլոր այդ վայրենի ու կիսավայրենի ցեղերի մէջ, որ նա ամեն ժամանակ կարող է յոյս ունենալ նրանց օգնութեան վրա. որ ամեն մի հարևան ցեղ իրան պարծանք կը համարի կռուել այդպիսի մի լեգէնդական զօրավարի առաջնորդութեան ներքոյ, բրիտանական յաղթական դրօշակի տակ:

Բայց չը նայելով բոլոր այս օրօրիչ խօսքերի վրա, միւս կողմից բոլորովին հակառակ լուրեր են հասնում Լօնդօն: Եւ ճշմարիտ սաստիկ հակասական են բոլոր այդ լուրերը, մի քանիսը սև են ասում, մի քանիսը սպիտակ, մի քանիսը հաստատում են, թէ պատերազմը բոլորովին վճռական ձևով վերջացած է, իսկ մի քանիսն ընդհակառակը՝ ասում են, որ անգլիական զօրքերին դեռ շատ բան է մնում անել Աֆրիկայում: Մի լրագիր ասում է, թէ մինչև որ անգլիական պողպատի հետ չը միանայ և նրա պաղարիւն քաղաքականութիւնը, այդ հարցը դեռ վճռական ձև չէ կարող ստանալ Կապի մէջ:

Աֆղանիստանի վերջին ապստամբական լուրերը նոր ոգևորութիւն ու նոր խրախոյս են տալի Բիկոնսֆիլդի և Սէլիզբիւրիի ներկայ քաղաքականութեան հակառակ կուսակցութիւններին. նրանք դարձեալ սկսում են բարձրաձայն ասել, որ նրանց քաղաքականութիւնը հիմնված չէ խաղաղասիրութեան արդարադատ սկզբունքի վրա, և այդպիսի քաղաքականութեամբ, նրանք մի օր սարսափելի խաղ կը խաղան Անգլիայի գլխին:

Հակավարչական լրագիրներն արդէն սկսել են զգուշացնել իրանց հայրենակիցներին այդ պետական մարդոց վնասակար և անխաղաղասէր քաղաքականութեան դէմ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ ԱԽԱԼՑԽԱՑՈՒՄ կայ հաւաքված մի հազար բուբլ յօգուտ զէյթունցիների: Ցայտնի չէ ինչ ճանապարհով ուզում էին նուիրատուները տեղը հասցնել իրանց հանգանակութիւնը: Ասում են որ այժմ երբ դիմում են նուիրատուներին և համոզում են նրանց ուղարկել փողերը «Արարատեան» ընկերութեանը, նուիրատուները հրաժարվում են ուղարկել յօգուտ «Արարատեան» ընկերութեան, ասելով որ զէյթունցիների համար է հաւաքված փողը:

***

Լսում ենք որ մեր աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեան արդէն ձեռնամուխ է եղել գրելու իր յիշատակարանը վերջին ռուս-թիւրքաց պատերազմից: Բրոշիւրը նուիրված կը լինի հանգուցեալ գէներալ Լազարեվի յիշատակին և վերնագրած՝ «Գէներալ Լազարեվ և Գաղթականութիւն:» Գրքի մէջ հանդէս կը հանվեն այնպիսի դօկումենտական իրողութիւններ, որոնք մի նոր լոյս կը սփռեն հանգուցեալ Լազարեվի և մի քանի այլ անձանց գործունէութիւնների վրա:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 սեպտեմբերի: Ամսոր գէներալ Կաուֆման Ս. Պետերբուրգից ուղևորվում է Տաշկենտ:

ՓԱՐԻԶ, 13|29 սեպտեմբերի: «République Française» լրագիրը խօսելով արտաքին քաղաքականութեան վրա նկատում է, որ Ֆրանսիան պէտք է չը մանակցի ոչ մի կազմակերպութեան, որ կարող է խանգարել նրա գործողութիւնների ազատութեանը և ոչ ոքի խորհուրդներին պէտք է չը հետևի: Նրան վայել է ուշադիր զգուշութիւն:

ՎԻԵՆՆԱ, 13|26 սեպտեմբերի: Երէկ երեկոյեան իշխան Բիսմարկ դուրս եկաւ Վիէննայից: Երկաթուղու կայարանի վրա կոմս Անդրաշի և Բէյս սրտագին ճնաս բարև ասացին Բիսմարկին: Ժողովուրդը ողջունում էր իշխան Բիսմարկին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75 կ., երկրորդ 93 ր. 75 կ., երրորդ 93 ր. 62 կ., չորրորդ 93 ր. 62 կ., դրքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 232 ր., երկրորդ 227 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 62 կ., երկրորդ 91 ր. 50 կ., ոսկի 7 ր. 87 կ.: Ռուսաց մի բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,09 պէնս. ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա արժէ 127 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 214 Ֆրանկ: Տրամադրութիւնը աւելի ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

պարզ նշմարվում էին մի քանի թուրքական պատկերներ:—Աղա, մենք քիւրդ ենք, հայ չենք, պատասխանեց մի արիադէմ կին, որի նսեմ գծերը յիշեցրին ինձ Շամախու նուագածու չանգիներին:—Եւ դա էլ քիւրդ է, հարցրի, սիրտ առած, ցոյց տալով նորա մի ընկերուհու վրա:—Քիւրդ է, բաս ինչ է, պատասխանեց նա երկդիմի ժպիտով, բօթելով այդ ժամանակ իր մատաղահաս ընկերուհուն:—Քիւրդ եմ, քիւրդ, աղա, քիւրդ եմ, հա, հա, հա, կարկաչեց վերջինը, ձգելով դէպի յետ մի խիստ կօկետ հայուացք: Եւ ինչ յայտնվեց այդ ամենից. մեզ հետ խառով կանայք իսկապէս վրացիք էին շրջակայ գիւղերից, բայց խրտնելով զինուորական հագուստից, նոքա վախենում էին պատասխանելու մեզ. երևի զօրականների հետ քաղցր վարվելը նոցա վրա թանգ է նստել որ և իցէ մի ժամանակ, վասն որոյ վախենում էին և մեզնից խղճալի արարածները: Ճանապարհի վրա գտնվում էին ևս մի քանի քիւրդարնակ գիւղեր, որոնց մէջ ապրողները կարծես խօսք են կապել բացառութիւն ձևացնել ասիական այդ ատանդական աւաղակների մէջ. նոքա բոլորն էլ ունեն նստակեցիկ դրութիւն՝ Ղոնդա, Նաքալաքլի և Մարգասան գիւղերի մէջ, որտեղ համարվում են նոյնչափ տոկուն հողագործներ, որչափ և հմուտ պարտիզպաններ: Եթէ խաչնարածութիւնը կազմում է ևս շատերի զբաղմունքը, բայց դորանով բնաւ չէ խանգարվում նոցա խաղաղ և նստակեցիկ կենցաղավարութիւնը և բարեկամական սերտ յարաբերութիւնը չրջապատող քրիստոնեայ գիւղերի հետ:

Մթթէ այս իրողութիւնը իրաւունք չէ կարող տալ մեզ ենթադրելու, որ Հայաստանի քիւրդերն էլ ևս կարող են հաստատարնակ մարդիկ լինել մի օր, եթէ միայն Թիւրքիան աչխատէ, քաղաքակրթող Անգլիայի օգնութեամբ, փոխանակ այս ինչ, այն ինչ բէկին պատժելու՝ միանգամայն խըլել բոլոր բէկերից նոցա տիրապետական իրաւունքները ցեղերի վրայից, տալով այս վերջիններին հողեր ինչպէս որոշ սեփականութիւն, նոյնպէս միջոց ազատօրէն անօրինելու իրանց կեանքը և աչխատութեան արդիւնքը: Մի ժողովուրդ, որի կեանքը և դրութիւնը պայմանաւորվում է թափառաշրջիկ եղանակով, միթէ ընդունակ է որ և իցէ մարդու և ազգութեան հետ եղբայրաբար ապրելու. տուր նրան միջոց տէր լինելու, ժառանգելու և աւանդելու իր յետագաներին մի որոշ սեփականութիւն, մի կտոր հող, որի վրա հաստատվելով նա կարող է վստահ լինել որ էլ ոչ ոք չէ կարող գլխին խփելով վրնդել նրան իր տեղից: Այն ժամանակ նոյն պարտիզպանութիւնը, նոյն խաղաղ հողագործութիւնը կը տեսնվի, ինչ տեսնվում է վերոյիշեալ երեք գիւղերի մէջ. այն ժամանակ նոյն սերտ և անխարդախ յարաբերութիւնը կը կապվի քրիստոնեաների հետ, որ պատահում ենք Վարձնի ճանապարհին: Հաստատվելով այստեղ երկու—երեք աանտեակ տարիների ընթացքում, քիւրդերը երևում են ոչ թէ միայն վնասակար դրացիներ և աւաղակաբարոյ մարդիկ, այլ աստուածավախ ժողովուրդ և հաւատարիմ բարեկամներ: Վարձնի վանահայրը ասում էր որ վանքի եռանդոտ պաչտպանը և յափշտակութիւնից ազատողը միայն մօտակայ քիւրդարնակ գիւղերն են, ապա թէ ոչ Աստուած ազատէ քրիստոնեաբնակ հայ, յոյն և վրաց գիւղերից: Որչափ ճշմարիտ են ս. հօր խօսքերը, թող նա հոգայ այդ մասին, միայն մենք ականատես էինք այն ջերմեռանդ երկրպագութեան, որին անձնատուր էին տաճարի մէջ ծնկաչոք քիւրդ կանայք և աղջիկներ: Այս տեղ ևս նոյն երևաց, ինչ տեսնվում է ամենուրեք. մուսուլմանադաւան քիւրդերը հայերի հետ էին միայն խառնվում, նոցա լեզուն միայն իմանում և նոցա հետ աղօթում, մի կողմ խմբված տաճարի մէջ լքցված խուռը ամբոխից: Մինչդեռ վրացիք համեմատաբար որչափ աւելի կոչտ են և չը վարվող օտարների հետ, առաջ կը բերեմ երկու անցք, որոնց պատահեցինք այդ օր. տարիները անցրած դնդապետը ենթարկվելով արեգակի կծու ազդեցութեան, մի քանի տասնեակ քայլերից յետ այնչափ թոյլութիւն սկսեց զգալ, որ անցնող երիտասարդ վրացիներին աղաչում էր վերստի համար երեք բուբլի ստանալ, թոյլ տալ միայն շահվել նոցա ձիաների մէկից: Ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում և ոչինչ համակրութիւն յայտնում:—Նկատում էք, Ա-դր Բ-իչ, որչափ խստաբարոյ են ձեր ազգակիցները, որոնց միշտ բարձր էք դասում հայերից, մինչդեռ երաչխաւորվումեմ ձեզ, որ հայերից չէր կարելի սպասել այդպէս մի տմարդի վարմունք:—Այո, այո, պատասխանեց նա թոյլ ձայնով, ես էլ մտածում էի այս բոպէ, որ հայերը գուցէ այդպէս չը վարվէին, երբ ես առաջարկում եմ երեք բուբլի վերստի համար:—Իսկ ես ընդհակառակը, կարծում եմ որ այնպիսի մի նպատակին դիմելու ժամանակ, կրօնասէր հայը ամենևին չէր հրապուրվի փողով, այլ դրդված կը լինէր միայն մարդասիրական զգացմունքից: Գնդապետը էլ ոչինչ չը պատասխանեց, ժպտալով միայն թերահաւատ կերպով. երևի նա շատ էր նախապաչարված հայերի իդէալական յատկութեան դէմ:

Երկրորդ անցքը այն էր, որ տաճարի մէջ մի քիւրդ կին արտասուքը աչքերին աղաչում էր վրացի տիրացուից մի քանի մամ վաճառել, մեկնելով դէպի նորան երկու-երեք հատ սև փող: Թչուառի ձեռքերը յետ էին մղվում ամեն անգամ «դէթ, մուրդար» խօսքերով:—Էլ ինչու ես հայհոյում այդ խեղճ կնոջ, եթէ չես ուզում մամ տալ նրան, նկատեցի ես անքաղաքավարի տիրացուին: Չէ, չէ, տալիս եմ, ինչու չեմ տալիս, տալիս եմ, և ահա տալիս եմ պարոն, պատասխանեց կմկմալով իր վարմունքից չփոթված տիրացուն: Երախտապարտ քիւրդ կինը հաճում էր ինձ, աչխատելով փեչերս համբուրել:

Քանի հայերէն էի խօսում, նա աւելի էր մօտենում ինձ, կարծես իրան մի հարազատ մարդուն: Այսպէս, ամեն դէպքում երևում է, որ մի մուսուլման ազգութիւն բնակվելով երկու—երեք քրիստոնեայ ազգերի մէջ, նա մօտենում է և սերտանում միայն հայերի հետ, վասն որոյ կարելի է աւելի հեշտութեամբ հաւատալ այն ենթադրութեան, որը այդչափ վստահ յայտնում է «Մշակը». թէ այն օրից, երբ վերացաւ Թիւրքիայի հայերի գլխից կամայականութիւնը և բռնութիւնը, երբ իւրաքանչիւր հայի կեանքը և կայքը նոյնչափ ապահոված կը լինեն օրէնքի և արդարութեան պաչտպանութեամբ, այդ օրից կը սկսվի արդէն ուրիշ փոքրիկ ազգերի հալվելը հայերի մէջ, ինչպէս աւելի կուլտուրական, աւելի աչխատող և աւելի տոկուն ազգի մէջ: Այդ թէորիայի իրագործվիլը հաւանական է մանաւանդ քիւրդերի պէս մի ժողովրդի վերաբերմամբ, որի մէջ ամենաքիչ է նշմարվում կրօնական մոլութիւն և կուլտուրական նշաններ: Բայց ռուսական առածը ասում. пока солнце взайдетъ роса очи выѣстъ.....

Գրիգոր Նիկողոսեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼԻՅԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ ԱՏԱՄՆԱԺՈՅԺ ԲԺԻՇԿ Լ. Ի. ԷԴԵԼՊԻՇՅԻՄԻ *թոյլ են տուած* Մոսկվայի ՐԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՑ։ *Այդ միջոցները մեծ* **ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ** *գտել և առաջարկվում են իբրև* **ԱՄԵՆԱԼԱԻ** *առողջապահական* **ՄԻԶՈՑՆԵՐ** *բերանի և ատամների համար։ Կարելի է* **ԱՏԱՄՆԵՐԸ** *պահպանել* ՓՕՇԻՆԱԼՈՒՑ, *սառեցնում են* ԼՕՐՁՈՒՆԵԻ ՐԱՐԸ *և վատ ՀՈՏԻ առաջն են առնում։*

Ատամնաբոյժ բժիշկ Ա. Ի. ԱԴԵԼԳԷՅՄԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ *գտնվում է* ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՍՕԿՈԼՈՎԻ *տանը։*

ԹԻՖԼԻՍՈՒՄ *կարելի է գտնել* Ա. Մ. ՑՈՒՐԻՆՈՎԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ *և անդրկովկասեան գլխաւոր* ՊԱՀԵՍՏՈՒՄ։

Ծախողների ՆՇԱՆԱՒՈՐ ՕԳՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

ՁԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՄԱՔՐԱՆՈՒ ՁԻՒԹԻՑ, *որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ։*

ԳԻՐՇՖԷԼԴՏԻՑ

Գիւոյի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% *էժան։*

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ։

Ծախելու տեղերը։ Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները։ Գլխաւոր պահեստները։ Մոսկվայում, Լուբեանսկի դեղատուն Ա. Ի. Գիրշֆէլդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա։ Թիֆլիսում Ցուրինովի և Բօստոմովի դեղատուն։

10—25

Մեր Ազգային դպրոցների Մեծապատիւ տեսուչներին և նոցա օգնականներին

«Ուսումն մայրենի լեզուի» վերնագրով Այբենարանիս չորրորդ տպագրութիւնն սկսելուց առաջ ուզում եմ իմանալ ձեր նկատողութիւնները այդ գրքոյկի մասին։ Եթէ կարևոր համարէք ինչ ինչ փոփոխութիւնների ենթարկել, յաւելուածներ և յապաւումներ անել, ես յօժարութեամբ կը կատարեմ առանց դիպչելու բուն սկզբունքին։

Այդ գիրքն է ընդունուած մեր ազգային գլխաւոր դպրոցներում՝ Թիֆլիսի Ներսիսեան և Գայեանեան դպրոցներում, Երևանայ Թեմական դպրանոցում, Ալէքսանդրապոլու տղայոց և օրիորդաց դպրոցներում, Ղարաբաղու Հոգևոր սեմինարիայում և Թեմի դպրոցներում։ Ինձ յայտնի չէ միայն միւս մանր դպրոցներից որոնցում է ընդունուած։ Սակայն ես այս ընդունելութենից ազատութեամբ շահուելու բաղձանք չունեմ, իմ միակ շահն կը լինէր այն, որ դա իւր եղանակով, բովանդակութեամբ և գնովը համապատասխանէր այդ ընդունելութեանը, իսկ այդ վեր է միակ մի հոգու ուժից, պէտք են բարոյապէս և ընկերսիրաբար օգնողներ, ահա այդ օգնութիւնն եմ ես խոնարհաբար խնդրում ձեզանից։ Իմ հասցէն—Շուշի, Ղազարոս Աղայեանցին։

3—3

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում Русское Слово—ԴԱՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, *աշխատասիրութիւն Կամսար Տէր—Դաւթեանցի, երկրորդ տպագրութիւն։* Գինն է 40 կոպէկ։ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԾԱԽՍԸ *առնողների վրա է։* Գումարով առնողներին ՄԵԾ ԶԻՋՈՒՄՆ *կը լինի, եթէ դիմեն ուղղակի աշխատասիրողին այս հասցէով.*

Тифлисъ. Камсару Теръ—Давидянцъ. Въ магазинѣ Бр. Абовьянцъ. На Михайловскомъ мосту.

2—3

Խնդրում եմ ՎԱՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ *հայոց հոգևոր ուսումնարանների* ՎԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ *հաղորդել ինձ թէ ինչ առարկաների* ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ *ունեն, ուղարկելով մի և նոյն ժամանակ իրանց յանձնված* ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՏԸ։

Թեմական Վերատեսուչ
ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ։

10—10

Թիֆլիսում էժան ծախվում է մի ՏՈՒՆ Պրիկազի պարտքով, Կուկիայում, Ալէքսանդրովսկայա փողոց, տուն № 63.

2—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ «ԳՈՒՐՋԻ» անուանված քարվանսարան, որ ունի 116 ԴՈՒՌՔԱՆ, 2 *մեծ* ՄԱԳԱԶԻՆ *պահեստի համար,* 2 ԱԽՈՒԱՆՈՑ, 2 ՍԵՆԵԱԿՆԵՐ *խոհանոցով և մեծ* ԱՒԱԶԱՆ *մշտական ջրով։ Սորա հետ ունի նմանապէս* ԴԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 *քառակուսի սաժէն։ Ցանկացողները* ՊԱՑՄԱՆՆԵՐԻ *մասին կարող են դիմել* Պ. ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՑԻՆ, *Թիֆլիսում, Գանովսկայա փողոցի վրա,* ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ։

9—20 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

և

Տարրական Ուսումնարան

—

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվին օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ին 1879 թ։

Մանկական Պարտէզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը։

Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցած, որ Ուսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիաների 1 և 2-որդ դասատունները մտնել։

Սօլօլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ. Ամատունու տուն, № 11. 4—4

ԹԻՖԼԻՍ 1879

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15

ՏԵՂԵԿԱՑՈՑ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Սեպտեմբերի 14-ին)

	Ռ.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	17
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—
Վիդրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	238	—
Երկրորդ 5% վիդրիչնի »	237	—
Մարսելի կուրսը 269—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	40
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	15
» միւս տեսակը	7	
» չաքար աւազը	5	30
» տրանզիտը	5	10
» մաքսը վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը թուշի	7	50
» թարաքամի	4	—
Աւիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լաստը) Ադուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի	22	—
« Մանտինիյօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ռ.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ։	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ	1. 29	11. 59
Ռիօն	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ։	
Փօթիից	9. 13	
Ռիօն	12. 13	
Միխայլօվօ	5. 39	1. 37
Գօրի	7. 5	4. 8
Թիֆլիս	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի	3.20	2.40	1.33
Սուրամ	5.22	3.92	2.18
Ռիօն	9.	6.75	3.75
Փօթի	13. 1	9.75	5.42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ *ներքին հիւանդութիւնների։*

Երեքշաբթի. Վերմիշեվ *ներքին հ., Բէյլիս աչքի հ., Ժուրավլէվ կաշու և վեներական հ., Բաբով կրծքի և ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.։*

Չորեքշաբթի. Լիսիցեվ *ներքին հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.։*

Հինգշաբթի. Վերմիշեվ *ներքին հ., Ժուրավլէվ կաշու և, վեներական հ.։*

Ուրբաթ. Լիսիցեվ *ներքին հ., Բաբով կրծքային և ներքին հ., Բաբաեվ հոգեկան հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և մանկական հ.։*

Շաբաթ. Վերմիշեվ *ներքին հ., Բէյլիս աչքի հ., Ժուրավլէվ կաշու և վեներական հ.։*

Օբրէխատ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ խեղճ հիւանդներին բժշկանոցի տոմսակով։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԳԱՆՁԱԿ. Մ. Ամբողջ նամակի մէջ միայն մի լուր կար հետաքրքիր, մնացածը կրկնութիւն է։

—ԼԵՆՈՐԱՆ. Ս. Ստացանք նամակը. օգուտ կը քաղենք։ Շնորհակալ ենք, որ կատարեցիք մեր յանձնարարութիւնը։

—ԵՐԵՒԱՆ. Ա. Եր. Շնորհակալութեամբ ստացանք նամակը։ Կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ։ Ձեր խոստմունքը շուտ կատարեցէք։

—ԵՐԵՒԱՆ. Շ. Յօդուածը ստացանք, բայց դեռ չը կարողացանք կարդալ։ Կը պատասխանենք։

—ԴԻԼԻՋԱՆ. Գ. Պ. Ձեր պատկերներից մէկը կը տպենք հետևեալ համարում։ Շարունակեցէք գրել. այդպիսի փոքրիկ պատկերները հետաքրքրութեամբ կարդացվում են։ Միւս պատկերները շարունակաբար կը տպենք։

Дозволено Цензурою 14 Сентября 1879 г. Тифлисъ.
Տպարան Ա. Ա. Միխելսոնի
Типографія А. А. Михельсона